



«Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ

ԼԻՑԵՆԶԻԱ 001112

ՀՀ ք. Երևան, Նոր Նորք,

Բորյան փ., շ. 4/1, Բն. 24

Հեռ.՝ 077 - 27 - 97 - 57

Էլ. Փոստ՝ a-r.project@mail.ru

“A-R PROJECT” LLC

LICENSE 001112

RA c. Yerevan, Nor Norq,

Boryan street 4/1, Ap. 24

Tel՝ 077 - 27 - 97 - 57

e-mail a-r.project@mail.ru



N 02/15

« 25 » 02 2026թ.

Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան N 03

Նախագծող՝ «ԻՆՏԵՐՎ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ

Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան

<<Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ>> ՍՊԸ -ն նախագծային պարզ փորձաքննության դիտարկելով ՀՀ Սյունիքի մարզ, Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Լեւոնագործների փողոցից դեպի Արմյան փողոցի մայրերի և շենք հարակից ընդհանուր վերականգնման նախագծի աշխատանքային փաստաթղթերը, որոշակիավորում է հաստատման: Առդիր՝ եզրակացություն է հանձնում:

Տնօրեն՝



Ա.Գրիգորյան

«Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն՝

Ա. Գրիգորյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ



ՀՀ Սյունիքի մարզ, Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Լեոնազործների փողոցից դեպի Աբովյան փողոցի մայրերի և շենքո հարակից ընթացքի վերականգնման նախագծի աշխատանքային փաստաթղթեր

Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան N 03

Նախագծող՝ «ԻՆՏԻՍ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ

Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախագծի կազմում ներառված է

1. Ճարտարապետա-շինարարական մաս
2. Նախահաշիվ

Ելակետային տվյալներում ներառված են հետևյալ փաստաթղթերը՝

1. Նախագծային կազմակերպության աշխատակազմի արտոնագրերի պատճեններ/ճարտարապետ / ՀՀ քաղաքաշինության կողմից տրամադրված լիցենզիայի պատճեններ:
2. Քաջարան համայնքի կողմից տրված «22» դեկտեմբերի 2025թ. N ՆԹ-11777-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:
3. Ինժինեռաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվություն տրված «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊ ընկերության կողմից:

Ընդհանուր բացատրագրում ներառված է նախագծի մշակման հիմքը, տարածքի բնութագիրը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեոմորֆոլոգիական տեսակետից Հետազոտվող տարածքը գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջին, Ողջի գետի հովտում, մարզկենտրոնից 18-20 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 1600-1800 մ բարձրության վրա:

Կլիման Համաձայն ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմերի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է շինարարության համար «ցուրտ» (3) կլիմայական շրջանում և բնութագրվում է շատ ցուրտ, քամոտ, խոնավ ձմեռներով և զով, օպտիմալ խոնավ ամառներով: Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական

տվյալներ՝

- Տարեկան միջին ջերմաստիճանը 6.8°C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 35°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -22°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 68%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 67%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 52%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 550-600մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 1.2մ/վ :
- Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 24մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 27սմ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱ-ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Գոյություն ունեցող ճանապարհի նկարագրությունը

Մայրերը գտնվում են անմիջապես վիճակում, պատվածքը ասֆալտբետոնյա է, իսկ որոշ հատվածներում առկա է բետոնյա սալիկներ: Մայրերի թե ասֆալտբետոնյա թե բետոնյա սալարկները գտնվում են քայքայված վիճակում, առկա են բազմաթիվ փոսեր և անվտանգ չեն հետիոտն անվտանգ անցման համար: Մայրերին կից առկա են ցածր հենապատեր, բազալտե մաշված և կիսաքանդ սալարկներով, նախագծում նախատեսված է փոխարինել բազալտե սալերը տրավերտինե սալարկով: Մայրերի վրա առկա են բազմաթիվ աստիճաններ և աստիճանահարթակներ, որոնք սալարկված են բազալտե սալերով, արանք նույնպես գտնվում են ոչ բարվոք վիճակում և ենթակա են վերանորոգման: Մայրերի եզրաքարերը փոխարինելու ժամանակ, նախագծում նախատեսված է եզրաքարին կից 30սմ զուգահեռ ուղղությամբ երթևեկելի մասի ասֆալտբետոնե շերտի կտրում, եզրաքարերի փոխարինում նորերի, ապա երթևեկելի այդ հատվածի վերականգնում: Նախագծով նախատեսված է նաև փողոցի լուսավորության, հին լուսատուների ապամոնտաժման և նոր լուսատուների կառուցման նախագիծը:

Հատակագիծ և երկայնական կտրվածք

Նախագծվող ճանապարհների հատակագիծը և երկայնական պրոֆիլը փոփոխության չեն ենթարկվել, փոփոխվել է որոշ հատվածներում ջրահեռացման ավելի արդյունավետ կազմակերպման համար: Մայրերին տրվել է լայնական թեքություններ, մայրից անձրևաջրերի հեռացման համար:

Մայրեր

Հետիոտնի անվտանգության համար նախատեսվում է իրականացնել մայրեր:

Մայրերի լայնությունը 1.5մ, որոշ հատվածներում մի փոքր լայնանում է:

• 30սմ Բ տիպի II մակնիշի խիտ մանրահատիկ ասֆալտբետոն, $h=12$ սմ, ГОСТ 9128-2013 աղյուսակ 3 – 222.6մ²,

• Հատիկավոր ենթահիմք (Ավազակոպճային շերտ), $h=10$ սմ, ГОСТ 23735-14, Грытта Ж17 - 222.6մ², եզրաքարերը

• Բազալտե 15x30սմ չափի եզրաքար ГОСТ 32018-2012 - 118.9զծ.մ

• Բետոնե В15 դասի միաձույլ 15x30սմ չափի եզրաքար – 147.0զծ.մ

Մայրերում նախատեսված են թեքահարթակները մուտքերի մոտ, ըստ անհրաժեշտության:

Թեքահարթակի չափերն ու ձևը կարող են փոփոխվել իրավիճակից ելնելով, ինչպես նաև պատվիրատուի ցանկության դեպքում: Ընդհանուր նախատեսված է կառուցել 8 հատ թեքահարթակ: Աշխատանքների տեղերը և ծավալները բերված են համապատասխան գծագրերում և ամփոփագրերում:

Հետիոտնի անվտանգության համար նախատեսվում է նորոգել մայրեր:

Մայրերի լայնությունը 1.0մ - 1.5մ

• Բետոնե մոխրագույն սալարկ (տոմետ), մ2, ԴՕՇՏ 9128-2013 աղյուսակ 3, ԴՕՇՏ 9128-2013 աղյուսակ 3,

• Հատիկավոր ենթահիմք (Ավազակոպձային շերտ), h=10սմ, ԴՕՇՏ 23735-14, Գրуппа Ж17,

Բազալտե 15x30սմ չափի եզրաքար ԴՕՇՏ 32018-2012

Մայրերի ընդհանուր մակերեսը կազմում է 1434.1մ2, որից 1153.5մ2՝ գունավոր սալարկ, իսկ 280.6մ2՝ մոխրագույն սալարկ:

Մայրերում նախատեսված են թեքահարթակները մուտքերի մոտ, ըստ անհրաժեշտության:

Թեքահարթակի չափերն ու ձևը կարող են փոփոխվել իրավիճակից ելնել, ինչպես նաև պատվիրատուի ցանկության դեպքում: Ընդհանուր նախատեսված է կառուցել 12հատ թեքահարթակ, քանակը նույնպես կարող է փոխվել, շինարարության ժամանակ պատվիրատուի պահանջով:

Սիզամարգերի եզրաքարերը իրենից նախատեսված է 8x20սմ չափի եզրաքարերից:

Բազրիքներ

Բազրիք նախատեսված է 28.3զծ.մ երկարությամբ մայրի այն հատվածում, որտեղ ձախ կողմից հարում է ջրատար առուն:

Հենապատեր

Ճանապարհի երկայնքով գտվող հենապատերը նախագծով վերանորոգվել են, ամրացվել են, իսկ որոշ հատվածներում կառուցվել են նոր հենապատեր: Որոշ հատվածներում հենապատերը սալարկված են բազալտե սալարկով, որոնք գտնվում են քայքայված վիճակում, նախագծով նախատեսվել է հենապատերի սալերի փոխարինում նորերով:

Ջրահեռացում

Վերանորոգվող ճանապարհահատվածում ջրահեռացումը իրականացվում է մակերևույթային:

Հենապատեր

Թիվ 19 շենքի հետնամասում գտնվող հենապատի մակերևույթային հատվածի սվաղը գտնվում է քայքայված վիճակում: Հենապատի 78.6 երկարությամբ հատվածի բարձրությունը կազմում է 6.0 մետր, իսկ հենապատը ուղղահայաց թեքվելուց հետո՝ 23.7 զծամետր հատվածի միջին բարձրությունը կազմում է 3.5 մետր: Հենապատի վերին հատվածը նույնպես քայքայված է, իսկ հետևի հատվածից լանջի գրունտները թափվում են բակ, դրա համար նախագծով նախատեսվել է հենապատի վերնից հենապատի բարձրացնել 500սմ ու: Քայքայված սվաղը քանդելուց հետո, հենապատի մակերևույթի վրա անհրաժեշտ է ամրակապման ամրաններով ամրացնել պողպատե եռակցված ցանց, հետո սվաղել ց/ա սվաղով՝ 5սմ միջին հաստությամբ:

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն 17 հոկտեմբերի 2024 թվականի N 1656-Ն :

Միջին աշխատավարձը ընդունված է 274368 դրամ:

Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները

- Հիմնական աշխատավարձ 2534.58
- Մեքենաների շահագործում 3034.86
- Տրանսպորտային ծախսերի գործակիցը 1.29

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության N01.2026թ ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները՝

- Այլ նյութեր 5%
- Պահեստավորման ծախսեր 2%
- Նախահաշվում հաշվարկված է նաև՝
- Վերադիր ծախսեր 13,3%
- Շահույթ 11,0%
- Ա.Ա.Հ 20,0%

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ն նշում է, որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:
3. Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանում է ՀՀ քաղշին, նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին:
4. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:
5. Նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է՝ 93782.29 հազար դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

Ուսումնասիրելով ներկայացված նախագծերը

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, Նախագիծը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

Տնօրեն

Ա.Գրիգորյան

Ճարտարապետ

Հ.Բաբայան

Կոնստրուկտոր

Ա.Գրիգորյան

